Արձանագրություն N 5

ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

06 փետրվարի 2020թ.
ժամը 10:30

Մասնակցում էին հանձնաժողովի նախագահ՝ Մամիկոն Հովհաննիսյանը, անդամներ Գոհար Սարգսյանը, Գայանե Տոռոզյանը, Էմմա Ադամյանը, քարտուղար Էռնեստ Դավթյանը «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի լիազոր ներկայացուցիչները:

Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին չեն մասնակցել «Սիլ Ինշուրանսի» ԱՓԲԸ-ի, «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ի և «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի լիազոր ներկայացուցիչները և նոր գնային առաջարկ չեն ներկայացրել:

Օրակարգ
գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների և ընտրված մասնակից ճանաչելու մասին

1. Գների նվազեցման շուրջ հրավիրված միաժամանակյա բանակցություններն, որը տեղի ունեցավ ք. Երևան, Նալբանդյան 128, գլխավոր մասնաշենք, 5-րդ հարկ N501 սենյակ հասցեում 2020թվականի փետրվարի 6-ին ժամը 10:00-ից մինչև 10:30-ը «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի լիազոր ներկայացուցիչները ներկայացրեցին նոր գնային առաջարկ:

1-ին չափաբաժին	Բժշկական ապահովագրության ծառայություն							
Մասնակցի անվանուը	Մինչև բանակցությունները ներկայացված գնային առաջարկ				Բանակցությունների արդյունքում ներկայացրեցին նոր գնային առաջարկ			
	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ	38,400,000	-	-	38,400,000	36,000,000	-	-	36,000,000
«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ	37,162,800	2,797,200	-	39,960,000	37,162,800	837,200	-	38,000,000

2. Բանակցություններին չներկայացած մասնակիցների գնային առաջարկները հանձնաժողովը որոշեց թողնել անփոփոխ:

3. Հանձնաժողովը ուսումնասիրելով մասնակիցների կողմից բանակցություններին ներկայացված նոր գնային առաջարկները համեմատելով այն 24 դեկտեմբերի 2019թ. մասնակիցների կողմից գնման հայտով ներկայացրած գնային առաջարկների հետ արձանագրեց՝ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված նոր գնային առաջարկով նվազեցումը իրականացվել է «Ինքնարժեք» բաղադրիչից:

4. Հանձնաժողովը քննարկեց և որոշեց՝

4"1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10 կետի և ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 5-րդ կետի 5.1 ենթակետի պահանջներիը գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված նոր գնային առաջարկը, քանի

նվազեցվել գնային առաջարկի ինքնարժեքի բաղադրիչը, դա կարող է հանգեցնել նաև գնումների գործընթացի շրջանակներում ոչ խտրական հիմունքներով կազմակերպման, մրցակցության խրախուսման, գնումների գործընթացի մասնակցելու իրավահավասարության սկզբունքների խախնման:

4.2 ընտրված մասնակից ճանաչել «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին և առաջարկել ներկայացնել ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 10-րդ կետի պահանջներին համաձայն նախատեսված փաստաթղթերը:

4.3 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Սիլ Ինշուրանսի» ԱՓԲԸ-ին,

4.5 3-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ–ին,

4.5 4-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ին:

5. Հաջորդ նիստ հրավիրել ընտրված մասնակից կողմից հրավերի պահանջներին համաձայն նախատեսված փաստաթղթերի ներկայացման հաջորդ աշխատանքային օրը ք. Երևան, Նալբանդյան 128, գլխավոր մասնաշենք, 5-րդ հարկ N501 սենյակ հասցեով ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի՝

նախագահ՝ _____ Մամիկոն Հովհաննիսյան

անդամներ՝ _____ Գոհար Սարգսյան

_____ Գայանե Տոռոզյան

_____ Էմմա Ադամյան

քարտուղար՝ _____ Էռնեստ Դավթյան